243
Z-81

1 OCT 2015

ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ԳԱՌՆԵՑԻՈՅ

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍԲԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

ՌՅԿ — 1911

12.06.2013
5531/1

Ի ՍՐԲԱԳՐՈՇՄ

ՕԹՈՒՄՆ ՔԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ

ՎԵՑԵՑՈՒՆՑ ՍԻՐԱԿՑՈՐԴ ՀԱՐԱԶԱՏԱՑ

Պ. Պ. Հ. Հ.

ՅԱԿՈՎԲՈՒ – ԹՈՎՄԱՅԻ

ԳՐԻԳՈՐԻՍԻ – ՄՈՎՍԻՍԻ

ԼԵՒՈՆԻ – ՂԱԶԱՐՈՒ

Ի ՇՆՈՐՀԱԲԱՇԽ ՏՕՆԻ

ԳԱԼՍՏԵԱՆ ՀՈԳԻՈՑՆ ՍՐԲՈՑ

ՀՐԱՒՈՒԱԼԻՐ ՄԱՂԹԱՆՕՔ

Ի ՍԵՐՏ ՍՐՏԻ

ԶՕՆԵԱԼ

ԱՐԶԱՆ ՑԻՇԱՏԱԿԻ

3705
41

Всес. Библиотека иностранной литературы
Москва

Всес. Библиотека иностранной литературы
Москва



ՅԱՌԱՋԱԲԱՆ

ԲԱՂՈՒՄՔ ի Սրբոց և. ի հոգեսիրաց շեալ սառնազարդս խնարեռտ վարանցիկ վայելից և. ուռնալնուրեանց առտի կենաց՝ հրաժարեալ յաշխարհի, և. զարաւնոյ բեռ առեալ քրիստոսի վերանալոյ, և. հեռացեալ դարդարեալ յանապատս՝ իբրև. զանմարմնոն ի մարմնի բաղաքավարեալ անդանօր։ — Մի ի ձգնաւորեաց արանց առտի (ԺԴ դարուն) էր և՝ հեղինակ Աղօթից՝ Յոմհանենս Վարդապետ Գառնեցի, զորմէ ապա գրի Կիրակոս Գանձակեցի

ի Պատմագրոչբեան իշրոյ[1]. «Այր ոմն առաքիլեի և. զաբանալի վարուք, գործող պատուիրանաց Աստուծոյ և. ծնաբարձ ի մանկոչբենի, Յովհաննես անուն, ի գիւղաքաղաքին Գառնոյ, ոչ զաբանալի սարաչոյրն և Տրդատայ[2], ի սոչրբ Ոչխտեն Այրիվանաց։ Սա ի մանկագոյն տիոցն սրհատանաց զանենալն ինչ կենցաղոյս՝ լրնալ զազգս և. զտոչն, յանապատ տեղիս բնակեր, սիրեր առանձին լինել և. անզբաղապես իսանչ ընդ Աստուծոյ. տոչնալ գինքն ազգի ազգի ձրգ-

1. Տպագր. ի Վենետիկ. Ս. Ղազար 1865. էջ 200։

2. Ի յետնոյ Թագաւ Տրդատայ կոչեցեալ և Հովանոյ Խոսրովիրեանոյ ի Խորենացւոյն. որոյ ցարդ երեւին մասյուռածք կործանեալք։

նուչբեան, պանոց և. աղօթից, զեռնատարած անկողնեօք և. անհանգիստ աշխատուչբեանք, չրջելով տեղչոչէ ի տեղի, և. չուսաչուրելով զպատահեալսն»։ Եչ ապրդարև., ի չբիկ մնչբիկ մխայնուչբեան անդ անապատին՝ ի խորոց քարանձաչաց անտի նորին՝ բնօք բերեալ չբեան հոգչոյն սրացեալ Վարդապետիս Յովհաննոչ յերկնաձեալ առաքաստն՝ յարաժամ «անզբաղապես իսանչ ընդ Աստուծոյ», ընդ Դչխոյին երկնից և երկրի, և. ընդ համօրեն դասս չուսանելոչ։ Եչ ահա ի սրտառուչ իսանչ անտի իչրոց ընդ Աստուծոյ՝ յօրինեալ կազմեաց նա՝ ի վերայ գրոյ անուչան իչրոյ՝ զԱղօթամատոյց մատեանս, որոյ սկզբնատառք յոգեն զայս բան. Յովանէս Գառնեցի. ա-

սացեալ։ Մատեան ոսկեղինիկ, որ յեօրն դարոյց հետէ պահեալ անկորուստ ի դեղբոչիս անդ աշեբակաց հայրենի աշխարհիս՝ եհատ ի ձեռս մեր. զորոյ Աղօրս այժմ ցիր և ցան գտեալ ի տարն գրչագիրս Մատենադարանի վանացս՝ յայլեցանէ զրնտրելագոյնն կազաք իբր ի բնագիր Աղօրիցս, այն է Գ. օր. Աղօրագրոց, բոլորգիր, գրեալ ի վերայ մագաղաթի, ի թուին ՌՃԴ (1655) օգոստ. Բ. (թիւ գրչ. 375. մեծ 11×7). յորում քան յայլսն առաջնագոյն թուով և ճշդութեամբ բովանդակեալ կային Աղօթքս. սակայն փոքր յանձին կազեալ միանգամայն համեմատել զիշխաբանչիւր Աղօթս ընդ այլ օրինակս գրչագրաց յիշատակելոց, և ուղղել ըստ նոցին զյայտնի երևեալսն մեզ վրիպանս ի բնագրին. և այսպէս ընծայեմք զայն ի լոյս տպագրութեամբ, ի վայելս պաշտօնէից Եկեղեցւոյ և համօրէն հաւատացելոց։

Հ. Ե. Ա.

ՅՈՎՀԱՆՆՈՒ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ԳԱՌՆԵՑԻՈՅ

ԱՂՕԹՔ

ԿԷՐԿԷԷ ՏՈՒՐՔ

ՅԱՒԻՏԵՆԻՑ Աստուած և տրարիչ բոլորիս, որ յայսմ աւուր սկսեալ ի սկզբանէ տարեր զերկինս և զերկիր, և որոշեցեր զլոյսն ի խաւարէն. խաւարեալս մեզոք անկանիմ առաջի քո և աղաչեմ զքեզ, Տէր իմ և Աստուած իմ, լուսաւորեա զխաւարեալ խոր-

հուրդս և զմթամ ծածկեալ մխոս, բայց զառիգածեալ առաջաստ զգայարանիս և ծագեա՛ առ ծառայս անպիտան զնշոյլ ճառագայթից քոց։ Փառքդ անպատում, որ փարեալ ի վերայ անհուն համբարձիւս ջրոցն՝ փայլեցո՛ առ փառնաքիս զփառաց լոյսդ սրբարար։ Մաքրեա՛ ի մեզայ ըզբազմամեղս, և սրբեա՛ յանսահման սղալանաց, Տէր իմ և Աստուած իմ, որ յայսմ աւուր կոչեցեր զլոյսն՝ տիւ, և զխաւարն կոչեցեր գիշեր. զգիշեր մեզայ իմոց և զխաւար անօրէնութեան իմոյ հերքեա՛ և հեռացո՛ յինէն։ Այլ դու, Տէր, գթած և մարդասէր, որ յառաջ քան զլինելն երկնի և երկրի պատրաստեցեր զարքայութիւնն

ի սկզբանէ սրբոց քոց, արա՛ և զիս արժանի ընդ նոսին փառաւորել զամենազօր տէրութիւնդ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԱՂՕԹՔ

Երէկուանէ աւուրն

Ո՛վ ամենակալ և ամենակարող Տէր իմ և Աստուած իմ, որ յայսմ աւուր քո ամենազօր և բարձրագոյն բանիւդ բաժանեալ անկրպետեցեր ըզբազմութիւն ջուրցն ընդ երկուս, և անշուշտ ամրութեամբ սահմանեցեր զհաստատութիւնն երկնից ի մէջ ջուրցն

տեղի զբօսանաց ամենայն զարդուն երկնից. անկանիմ առաջի քո և աղաչեմ զքեզ, ասա բանիւդ այդուիկ ասա խ, եթէ «Թողեալ լիցին քեզ մեղք քո բազում». «քանզի անօրէնութիւնք իմ բարձրացան քան զգլուխ իմ, և բազմութիւն յանցանաց իմոց ծածկեաց զիս»։ Զիք չափ չարեաց չարասիրիս, և ոչ գոյ թիւ թաղծեալ անօրինիս։ Մեկնեա՛ յինէն զյանցանս իմ, Տէր, անջրպետեալ վերացո՛ ի վսերէս զվէրս վիրաւորեալ ծառայիս, և արա՛ արժանի զանպիտան ծառայս երկնից արքայութեանդ ընդ ամենայն սուրբս քո, զի ընդ նոսին փառաւորեցից զամենազօր տէրութիւնդ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԱՂՕԹՔ

Երեւշաբթի առաւօտն

ԵՐԻՆ վայելչութեանդդ վերանորոգող և ստորոյնոցս ստեղծող, Տէր իմ և Աստուած իմ, որ յայսմ աւուր հրամայեցեր անբաւութեան ջրոյն ժողովիլ ի ժողովս իւրեանց, յորում երևեցաւ ցամաքն հանդերձ բարեբողջութեամբ և անկօք և ամենայն բարի պտղօք յազգս իւրեանց։ Անկանիմ առաջի քո և խընդրեմ ի քէն թարշամեալս ի հոգևոր ծաղկանցն, և անպտուղս ի բարի արգասեացն,

հայեայ ի ստեղծուածս անմեղ մատանցդ, և գործս անա-
բատ ձեռացդ մի անտես առ-
ներ, այլ նախախնամական
սիրովդ խնայեա՛ ի խախտելս
և ի տարակուսելս մեզոք.
զի նեռք նենգաւորին խոցո-
տեցին զիս, և հարան յիս
փուշք բանսարկուին, վիրա-
ւորեաց զիս վիշապն ահագին,
և թոյնք մահաբեր դազանին
թափեցան ի վերայ իմ. չիք
ուսանէք փրկութիւն, և ոչ
գոյ բժշկութիւն հոգւոյ իմոյ։
Ա.ՐԴ, հայցեմ ամենամեղս
յամենազօր տէրութենէդ,
բժշկեա՛ զբեկեալ սիրտս և պա-
տեա, մարդասէր Տէր, զկա-
րեվէրս. և որպէս այսօր որո-
շեցեր զմուրն ի ցամաքէն,
նոյնպէս որոշեա՛ յինէն զա-
մենայն անօրէնութիւնս իմ,

և արժանի արա երկնից ար-
քայութեանդ, ընդ ամենայն
սուրբս փառաւորել զամենա-
զօր տէրութիւնդ յաւիտեանս
յաւիտենից. ամէն։

ԱՂՕԹՔ

Զոբէ+շաբաթի առաւօտն

3705
41

ՆԿԱՆԻՄ առաջի
քո և ազաչեմ ըզ-
քեզ, Տէր իմ և
Աստուած իմ, անճառ ճառա-
գայթ և անհասանելի լոյս, և
լուսեղինաց գասուցդ յօրինիչ,
և լուսաւորացդ երկնից ստեղ-
ծող, Երրորդութիւն սուրբ,
որ յայսմ աւուր գոյացուցեր

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

զարեգակն և զլուսին և զաստեղս, և եղեր զնոսա ի հաստատութեան երկնից լուսաւորել զարարածս, և ցուցանել զժամս և զժամանակս, զաւուրս և զտարիս։ Եւ արդ, ես խափանեալս ի լուսոյ, և ծածկեալս խաւարաւ մեղաց՝ հայցեմ յամենալոյս ողորմութենէդ. որպէս տարրական լուսաւորացդ շնորհեցեր լոյս, շնորհեա՛ և ինձ յառատ և յանհամեմատ լուսոյդ փոքր մի մասն և բաժին, և փարատեա՛ յինէն զմէգ և զխաւար յանցանաց, և անանց լուսովդ առատշնորդեա՛ ինձ յարքայութիւնդ, ընդ ամենայն սուրբս փառաւորել զամենազօր տէրութիւնդ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԱՂՕԹՔ

ՀԻՆԳՇԱԲԹԻ ԱՌՈՒՐՆ

ԵՐՈՂ և ներգործող բարեաց, բազմագութ և ողորմած Տէր իմ և Աստուած իմ, որ յայսմ աւուր հրամայեցեր ջրոյն հանել յինքենէ զհոյլս զեռնոց և ձկանց ծովու և թռչնոց երկնից, և օրհնեցեր զնոսա աճել և բազմանալ, և մինչև յայսօր և առ յապա խնամարկես ի վերայ նոցա։ Եւ արդ, ես բազմամեղս անկեալ ազաչեմ զքեզ, բազմազեղ և ազնուագութ Տէր, մի

անտես առներ զմեղաւորս ի պահպանութենէդ քումմէ և մի մերժեր զյանցաւորս ի պարգևաց քոց, այլ ցոյց ինձ զողորմութիւնդ քո, և արա առ խս նշան բարութեան։ Բարձ զբեռինս բարկացուցանողիս, և ազատեա զտառապեալս ի տոհանց մեղաց։ Մի բարկանար ինձ, Տէր, վասն բազում անօրէնութեան իմոյ, և մի դատապարտեր զդառնացուցիչս վասն անուանդ քում սրբոյ, այլ տուր ձեռն տարօրինեցելոյս, և հան ի խորոց անդնդոց զխորասուզեալս մեղօք, մաքրեա յաղտոյ մեղաց և ազատեա ի խղճէ մտաց զբազմաբիծս, զորդիս կորբատեան արա որդիս լուսոյ, և զհեռացեալս յարդարութենէ՝ արա մերձաւոր քոց սրբոցն և

սիրելեաց. զի ընդ նոսին մբատեալ ի հանգիստն մշանջենաւոր՝ փառաւորեցից զամենազօր տէրութիւնդ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԱՂՕԹՔ

Ո-ԲՔՈՒԹ ԱՌՈՐԴ

Ի ԱՊԷՍ բարի և ամենակարող, Տէր իմ և Աստուած իմ, որ յայսմ աւուր հրամայեցեր երկրի հանել յիւրմէ զգազանս և զանասունս և զսողունս և զչորքոտանիս յազգս իւրեանց, զվայրենիս և զընտանիս, և յայսմ աւուր արարեր զմարդն անձնիշխան, և կացուցեր զնա

տէր և իշխան ի վերայ ամենայն ձեռակերտաց քոց, և եղեր զնա ի գլխաւորն փափկութեան պահել զպատուիրանն, բայց իմ է պատուիրանազանցութիւն Նախահօրն, որով արտաքսեցաք ի պայծառ պատուոյն և ի փափուկ փառացն։ Մանաւանդ զի նա մի անգամ խաբեցաւ փոքր և թեթև յանցմամբ, իսկ ես անթիւ և մեծամեծ յանցանօք մեղանչեմ անդադար. ուստի և վասն պարտաւորելոյս բարձար յայսմ աւուր Բանդ Աստուած ի վերայ խաչին։ Եւ արդ, աղաչեմ զքեզ, երկայնամիտ և անոխակալ Տէր իմ և Աստուած իմ, ողորմեա ինձ ողորմելոյս և մեղօք լցելոյս։ Մի ընդ վայր հարկաներ ըզպատկերս՝ յոր փչեցեր և մի մատներ յաւետենից տանջանացն՝ զոր ստեղծեր. զի քո եմ Տէր, և ի քեզ յուսամ, և ի քէն ակն ունիմ արձակել ի կապոյ յանցանացս։ Ուստի և հանդիպեցուցեա զիս, Տէր, թողութեան մեղաց, և քաւութեան յանցանաց. և մասնակից արասցես զվերիպեալս արանց արդարոց և ի սկզբանէ ընտրելոցն, զի ընդ նոսին հանգուցեալ փառաւորեցից զամենազօր տէրութիւնդ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԱՂՕԹՔ

Շաբաթու առաւօտեան

ՈՒՐԲ Երրորդութիւն անբաժանելի, անճառելի և անաշխատ, որ յայսմ աւուր հանդերձեալ յամենայն գործոց քոց, զոր սկսար առնել և կատարել, որ նշանակեաց հանգիստն ըղթաղումն աստուածացեալ մարմնոյդ, որ աշխատեցար բազկատարած բևեռամամբն ի վերայ կենսաբեր սուրբ խաչին։ Եւ արդ, ահա ես ամենամեղս անկեալ ապաչեմ զքեզ, Տէր իմ և Աստուած իմ, յոյս իմ, Յիսուս Քրիստոս, և խնդրեմ

վասն փառաց երեսաց Հօրդ լուսոյ, և վասն փառակցութեան Հոգւոյդ Սրբոյ, և վասն կամաւոր չարչարանաց քոց, և վասն կենդանարմատ փայտին և սուրբ բևեռացն, և վասն հեղման քրքմատեսակ ազատարար սուրբ արեանդ, և վասն երեքօրեայ թաղմանն և հրաշալի յարութեանն, և վասն կուսական կաթինն Մարիամու Սրբոյ Աստուածածնին, և վասն սիրոյ և բարեխօսութեան ամենայն սրբոց քոց, երկնաւորաց և երկրաւորաց, սրբեա՛ զիս յամենայն մեղաց իմոց և ազատեա՛ ի դառն վշտաց գեհենայն, և արժանի արա զանպիսան ծառայս խոստացեալ բարեացն ընդ ամենայն սուրբս քո, զի ընդ նոսին հանգուցեալ փա-

ռաւորեցիս զՀայր և զՈրդի
և զՍուրբ Հոգին. այժմ և
միշտ և յաւիտեանս յաւիտե-
նից. ամէն։

ԱՂՕԹՔ

Ա՛ Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Զ Ա Ն Ա Ստուծոյ,
Տէր իմ և Ա-
ստուած, Յիսուս
Քրիստոս, որ զենար ի վերայ
խաչին և բարձեր զմեզս աշ-
խարհի։ Մեղուցեալ ծառայս
և ծանրաբեռնեալս յանցանօք՝
անկեալ ապաշեմ զքեզ, Տէր
իմ և Աստուած իմ։ Ողորմեա

ինձ, որպէս ողորմեցար հա-
մօրէն աշխարհի, զի դու ես
յոյս և լոյս աշխարհի, ճա-
նապարհ և ճշմարտութիւն և
կեանք։ Զմահացեալս մեղօք
և զանօրինեալս յանցանօք՝
մի անտես առներ. այլ ողոր-
մեա ինձ վասն ամենայն անօ-
րինական կրից քոց, որոց տա-
բար համբերութեամբ բաղ-
մաւ։

Յիշեա, ամենակեցոյց Տէր,
զիջումն քո ի հայրական ծա-
ցոյն, և զմարմնանալն ի սրբոյ
Կուսէն Մարիամայ։ Յիշեա,
ամենօրհնեալ Տէր, զչարչարն քո
իբրև զմարդ՝ ի մէջ մեղաւո-
րաց մարդկան։ Յիշեա, ամե-
նասուրբ Տէր, զմկրտիլն քո ի
Յորդանան ի Յովհաննէ։ Յի-
շեա, ամենազէտ Տէր, զդարձ-
վանան ի դպրացն և զփոր-

ձանան ի փարիսեցւոցն։ Յիշեա, յառաջատես Տէր, զմանիին ի Յուդայէ, և զքամահիին ի քահանայիցն։ Յիշեա, ամենազօր Տէր, զբմբռնիին ի պարտիզին և զձեռնակապիին ի խուժանէն։ Յիշեա, ամենակարող Տէր, զկալն առաջի Կայիափայի և զհարցումն ի յԱննայէ։ Յիշեա, անսխալ Տէր, զապտակն ի ծառայէն և զկռուփն ի կատաղեացն։ Յիշեա, երկայնամիտ Տէր, զթուքն ի յԵրբայեցւոցն և զծեծն եղեգամբ։ Յիշեա, արքայ արքայից, զկապանօք կանգնիլն ի յատենին Պիղատոսի և զգանիին ի նմանէ։ Յիշեա, անմատոյց լոյս, զքղամիդն կարմիր և զպատկն փշէզէն։ Յիշեա, անյիշաչար Տէր, զժամն զայն, յորժամ բարձեր

զխաչափայտն կենսաբեր ուսովդ։ Յիշեա, Բարձրեալ, զբարձրանալն քո ի վերայ կենդանարմատ փայտին և զպատրաստելին բեռոք։ Յիշեա, մի մոռանար զպատքումն ծառուոյն, և զճաշակ լեզուոյն և քացախին։ Յիշեա, մի մոռանար զձայնն էլի էլի, և զխոցումն ի զինուորէն։ Յիշեա, մի մոռանար զհատումն վարդագոյն սուրբ արեանդ և զխոնարհիլն ստուգածացեալ գլխոյդ։ Յիշեա, կենդանիդ յաւիտենից՝ զթողումն երեքօրեայ և զյարութիւնն աստուածապէս և զհամբարձումն հրաշափառապէս։ Յիշեա, յիշեա յիշատակդ յաւիտենից, զկորուսեալս. քանզի վասն մեղաւորիս յանձն առեր զայս ամենայն, ամենագութ Տէր։

Սրդ զայս ամենայն ունիմ առ քեզ միշնորդ և բարեխօս, բազումողորմ, ողորմեա ինձ, և թող զամենայն յանցանս իմ, և սրբեա ի մեզաց. ազատեա յանվախճան վշտաց գեհենին, և տուր ինձ տեղի յարքայութեանդ քում, զի դու ես մարդասէր Տէր։ Եւ քեզ ընդ Հօր և ընդ Հոգւոյն Սրբոյ վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԱՂՕԹՔ

Առ Սուրբ Աստուածածին

Ս Տ Ո Ւ Գ Ա Ծ Ա Ծ Ի Ն, մայր Քրիստոսի, և ծնող Միածնին Հօր, բարձող անիծից, և պարծանք ազգի մարդկան. յերկնային զօրացն երանեալ, և ի հրեշտակաց օրհնեալ. միջնորդ Աստուծոյ և մարդկան, և հաշտարար Հօր ընդ արարածս. թագ և պսակ կուսից, և համարձակ բարեխօս մեղաւորաց։ Մեղուցեալս յամենայնի՝ անկանիմ առաջի քո, և աղաչեմ իբրև զնոյն ինքն զմարմնացեալն ի քէն, բարե-

խօսեա վասն իմ առ Բանն Աստուած, զոր ծնար մարմնով, զոր կերակրեցեր՝ զկերակրիչն ամենայնի և ամենայն կենդանեաց։ Աղաչեա վասն իմ զանդրանիկդ քո. կոց կանգուն առաջի նորա ցուցմամբ սուրբ ատեանցդ. կացո առաջի նորա միջնորդ և բարեխօս զմանկութիւն իւր, զկաթամբ սնանիլն որպէս մանուկ, զուսով բառնիլն, զգբկօք գգուիլն, զչրթամբք համբուրիլն, զողջագուրիլն որպէս աղայ, զերթևեկելն քո ընդ նմա Եգիպտոս և ի Նազարէթ և յամենայն տեղիս։ Զարամութեամբ տառապիլն վասն զորս ի ժամ չարչարանացն. զյանձնարարութիւնն քո առ Յովհաննէս, յորժամ հեզուսեալ կայր վշտօք ի վերայ խաչին. զդառն արտասուսն քո՝ զոր վատակօրէն հեզուիր, յորժամ տեսանէիր զնա վանդեալ ի վերայ խաչին։ Վասն որոյ մատնի ի դատաստան՝ տառապէիր կսկիծակոծ. վասն չարաչար չարչարանացն, վասն ատատիկ ծարաւմանն, վասն ճաշակմանն լեղւոյն և քացախին, վասն տեսանելոյն զբբքմատեսակ արիւնն իջեալ, վասն իջուցանելոյն ի խաչէն արիւնազանգ մարմնովն, վասն գիսազարդիկ դնելոյն ի սուրբ գերեզմանն։

Աղաչեմ զքեզ, Մայր լուսոյ, հայցեա՛ վասն իմ. զի՛ր ազերս ազաչանաց առաջի գոր բա զամենայն կիրս չարչարանացն իւրոց. զի վասն իմ կրեաց բարերարն և մարդասէրն։ Յիշեցո՛, սուրբ Կոյս,

զայսքան չարչարանքս, զի թերևս ողորմեսցի և ներեսցէ բազմամեղիս, և ընկեսցէ զճառագիր յանցանաց իմոց, և իւրով անմեղ մատամբն և սուրբ արեամբն դրոշմեսցէ զդեղեբերսս ի գպրութիւն կենացն անվախճանից առ ամենայն սուրբս իւր. զի ընդ նոսին փառաւորեցից զամենասուրբ զԵրրորդութիւնն՝ զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգի. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԱՂՕԹՔ

Ա՛ՏԵՐՆ ԴԷ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

ԱՀ լուսոյ և ճշմարիտ ճանապարհ կենացն յաւիտենից, Քրիստոս Աստուած։ Դու ես գուռն լուսոյ և բղխումն ողորմութեան, դու ես հովիւքաջ և գարձուցիչ մոլորելոց, դու ես թողիչ մեղաց և քաւիչ յանցանաց։ Յանցաւոր ծառայս քո և բազմամեղս խընդրեմ յառատ ողորմութենէդ քումմէ, մի յիշեր զմեղս իմ զառաջինսն, այլ հանդերձ միջնօքն և վերջնօքն վերացո՛ յինէն։ Սրբեա՛ զիս սրբարար զո-

բութեամբդ, և ապատեա յանթիւ յանցանացս. մաքրեա զիս ի խղճէ մտացս, և արձակեա ի կապից մեղաց։ Թող ինձ զպարտս իմ, որպէս թողեր անդամանաւծին, և արդարացո՛ իբրև զմաքսաւորն. զերծո՛ զիս յանհերելի տանջանացն և մոյծ զմոլորեալս ի խորանս սիրոգաց քոց. զի և ես ընդ նոսին փառաւորեցից զքեզ ընդ Հօր և ընդ Հոգւոյդ Սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԱՂՕԹՔ

Ա՛ Տէրն Դէր Յիսուս Քրիստոս

Ա՛ՅՆ Ա՛ քաղցրութեամբ առ դատնացուցիչս, Տէր իմ Աստուած իմ, Յիսուս Քրիստոս։ Մի բարկանար ինձ, Տէր, վասն բազում մեղաց իմոց, և մի մերժեր ի սպառ զգործս ձեռաց քոց. մի հասցէ ի վերայ իմ ցասումն անսխալելդ, և մի անտես արասցես զտարակուսեալս, Տէր երկայնամիտ և անչիշաչար։ Յիշեա, մարդասէր, զվերստորանդեալս մեղօք, և պատեա զոլորմութեամբ զվէրս վի-

բաւորելոյս, քան զի տուուանք մեզայ պատեցան զինեւ, և հոյւք յանցանաց պաշարեցին զիս։ Հոս յօդնութիւն կոր-ծանելոյս, և փրկեա զկապրա-կեալս ի մեզայ, յորմէ զո-զամ՝ ի գառնութենէ գժոխոցն ապրեցո զիս, Տէր իմ. և յոր-մէ սարսիմ՝ յանչէջ հրոյն պա-հեա զիս, Աստուած իմ. զմե-ղօք ազատեալս սրբեա, Տէր իմ, և ի սկզբանէ սրբոցն մաս-նակից արա զիս, Աստուած իմ. և զհարուածեալս ի մե-ղայ՝ հրաւիրեա յանճառ երկ-նից յարքայութիւնդ, առ կա-մարարս անուանդ քում սբր-բոյ, զի ընդ նոսին փառա-ւորեցից զամենազօր տէրու-թիւնդ յաւիտեանս յաւիտե-նից։ ամէն։

ԱՂՕԹՔ

Ա.— Տէրն Դէր Յէսուս Քրիստոս

ԲԿՆԱՒՈՐ թագա-ւոր, որ վասն զիս-ի միոյ մեղաւո-րի՝ զՀայր և զՀոգի հանդերձ հրեշտակօքն ուրախացուցեր, ապա մի յապաղեսցէ յինէն գութ ողորմութեան քո. զիա զկարուսեալս մեզօք ի խորս անդնդոց, և արա խրախու-թիւն ի բարձունս երկնաւո-րացդ. կանգնեա զգլորեալս ի մեզայ, լուսաւորեա զփաստա-բեալս, սրբեա զաղտեղեալս, դարձո զմոլորեալս։ Մի թո-ղուր զիս ի կամս անձին իմոյ

գնալ, զի մի տիրեսցեն ինձ
ամենայն մեղք իմ։ Խնդրեմ,
Տէր, հայցեմ և բռնեմ, բայց
ինձ, Տէր, զզուռն ողորմու-
թեան քո։ Մի ընդ վայր և ի
զուր լիցի այնքան աշխատու-
թիւնն վասն իմ, զոր կրեցեր ի
Գողգոթա՝ խաչն, բևեռքն,
ծարաւն, լեղին, քացախն,
հարուածք տիգին, հեղումն
արեանդ, ձայնն ահաւոր, գո-
չումն ուժգին, բարբառն էլի
էլի, նաև այլ ամենայն վիշա-
քքն՝ զոր կրեցեր վասն կո-
րուսելոյս։ Վասն որոյ միջնորդ
և բարեխօս ունիմ առ քեզ
զփրկարար անօրէնութեամբ
զկիրան, փրկեա զմեզուցեալս
ի սպառնալեաց գեհենայն, և
հանգո՛ զգինս արեան անեղիդ
յերկնային առագաստն լու-
սոյ։ զի ընդ ամենայն սուրբս

քո փառաւորեցիր զքեզ ընդ Հօր և ընդ Հոգւոյդ Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԱՂՕԹՔ

Ա- ՏԷՐ Ա-ՊՈ-ԾԺ

ԱՒԱԳԵԱԼՍ մեզ զօք և ցանկօրդեալս քաւութեան մեզաց և յանցանաց, խնդրեմ ի քէն, Տէր բարերար և բազմագութ. մի յաւիտեան բարկանար ինձ, բարերար, վասն բազում մեզաց իմոց. և մի ցանգ ցասնուր ցնորեցայս ի մեզս, երկայնամիտ Տէր։ Յիշեա, զի մարմին իմ գիւրագլոր, պա-

տրանք երևելեցոյս խարեցիկն
զպակասամիտս. և ցանկու-
թիւնս չարեաց կուրացոյց
զաչս ոգւոյս. մոռացայ զգութն
քո, որ ասի և վասնեցի ըզ-
պարգևս ողորմութեան քո,
յետս հարի զանմահարար սէր
քո, և արհամարհեցի զնան-
մակալութիւն Աբարչիդ, հեռ-
ատեցի յօրինաց քոց, Տէր, և
ապստամբեցի ի պատուիրա-
նաց հզօրիդ։ Վասն այսորիկ
մերժեցեր զմեզուցեալս և ընդ
վայր հարեր զվայրագնացս,
այլ չիք ուստեք փրկութիւն
իմ, Տէր։ Դու ստեղծեր զիս,
զմիր զձեռն քո ի վերայ վի-
բաւորեալ ոգւոյս. քեզ մեղայ,
փրկութիւնդ յաւիտենից, մի
դարձուցաներ զերեսս քո յի-
նէն, և մի խոտորիր բարկու-
թեամբ յանպիտան ծառայէս։

Երևեցո զերեսս քո ի ծառայս
քո, և քաղցր հայեաց առ իս
ամենատես աչօքդ. փրկեա
զաշխարեալս ի հրոյն յաւիտե-
նից, և ազատեա ի բորբոքեալ
ըստոյն։ Արժանացո զատարա-
կուսեալս անանց փառացն
հանդիպել, և փառաւորել զա-
մենազօր սէրութիւնդ յաւի-
տեանս յաւիտենից. ամէն։

ԱՂՕԹՔ

Ա՜ Տէրն Դէր Յէսուս Քրիստոս

Քեզ յուսամ, Յիսուս Քրիստոս, յոյս իմ, և ապաշեմ, քանզի բազում են յանցանք իմ առաւել քան զաւազ ծովու։ Ահա զմեզս իմ ցուցիր քեզ, Տէր, մեղայ և զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ։ Մի յիշեր զմեղս իմ, Տէր իմ Տէր, և մի համարիր զամբարշտութիւնս իմ, Աստուած Աստուած իմ։ Մի ըստ անզգամութեան իմում գտներ զիս, Տէր իմ Տէր, և մի հաստուցաներ ինձ ըստ գործոց

իմոց, Աստուած Աստուած իմ։ Մի դներ ի կշիռ զծանրութիւն մեզաց իմոց, Տէր իմ Տէր, և մի խնդրեր համար անթիւ յանցանաց իմոց, Աստուած Աստուած իմ։ Մի հարցափորձ քննութեամբ զարհուրեցուցաներ զիս, Տէր իմ Տէր, և մի մանրամասն յուզեսցես զծածուկսն իմ, Աստուած Աստուած իմ։ Մի յահեղ հրապարակին հրատարակեսցես զգաղտնիս իմ, Տէր իմ Տէր, և մի ամաստելով ապառնայցես ինձ, Աստուած Աստուած իմ։ Մի ասասցես ինձ «ծառայ չար և վատ», Տէր իմ Տէր, և մի հրամայեսցես հրեղէն կապանօքն կապել զոտս իմ և զձեռս, Աստուած Աստուած իմ։ Մի ընկենուր զիս ի բոցն բորբո-

քեալ, Տէր իմ Տէր, և մի ծածկեսցես զծանուցեալս ի բոցածուալ ծովն, Աստուած Աստուած իմ։ Մի տարցես զիս ի գետն հրեղէն, Տէր իմ Տէր, և մի վտակաւ կայծականց վտանեսցես զիս, Աստուած Աստուած իմ։ Մի տայցես զտառապեալս ի տուր տարտարոսին, Տէր իմ Տէր, և մի անվախճան որդամբքն կըշտամբեսցես զիս, Աստուած Աստուած իմ։ Մի առաքեսցես զեղկելիս ի խաւարն արտաքին, Տէր իմ Տէր, և մի արտագրեսցես զողորմելիս ի լալ աչաց և ի կրճել ատամանցն, Աստուած Աստուած իմ։ Մի որոշեր զբազմամեղս յերամէ երանելեացն, Տէր իմ Տէր. և մի զրկեր զտարակուսեալս յերանաւէտ փառացն, Աստուած Աստուած իմ։ Այլ ըստ անհամեմատ մարդասիրութեանդ, և ըստ բազմախնամ ողորմութեանդ, ողորմեա՛ ողորմելի ծառայիս, և փրկեա՛ ի դառնագոյն վշտաց գեհենայն. և արա՛ արժանի մատնել ի խոստացեալ բարիսն քո ընդ ամենայն սուրբս, և ընդ նոսին փառաւորել զքեզ ընդ Հօր և Սրբոյ Հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԱՂՕԹՔ

Ա. Տէր Վասն Հիշեցոյ

ՂԱՁԵՄ զքեզ, Տէր Աստուած ամենակալ, և գոհանամ զանհաս մարդասիրութենէդ քումմէ, որ արժանի արարեր զանարժան ծառայս քո ժամանել ի ժամ գիշերոյս։ Դու ես տէր տունջեան և գոյացուցիչ գիշերոյ, դու պահպանեա զիս ի կարծեաց ցնորից և յերկիւղէ յերևելեաց և յաներևութից թշնամեաց, և ամրացո՛ ի զառնութենէ գիւսոյ, ի բանութենէն բելիարայ, ի սատակց սատանայի,

ի ծանրութենէ խիպիլիկայ, ի փլմանէ շինուածոյս, ի նենգութենէ մարդկան, ի յաղանգոյ կախարդաց, ի մոլար խորհրդոյ, ի յաղտեղի մտածութեանց, ի ցանկական ցաւոց, ի զարհուրանաց քնոյ, ի գառն երազոց, ի յարհաւրաց չարին, ի յամբոխական անբարջոյ, և ի յայլ ամենայն իրաց չարաց պահպանեա զծառայս քո ամենակեցոյց Հոգիդ։ Եւ քո ամենահնար ողորմութեամբդ շրջապատեալ ամրացո՛ յամենայն կողմանց զանեակ հանգստարանիս յաջ և յահեակ, ի հիւսիս և ի հարաւ, ի յարևելս և յարևմուտս, ի յերկինս ի վեր և յերկիր ի խոնարհ, զբանակս հրեշտակաց առաքեա, Տէր, ի բնակարան ծառայիս։ Տո՛ւր

ինձ, Տէր, լուսաւոր խորհուրդ և արդիւնական մտածութիւն. տուր ինձ, Տէր, արթնութիւն մտացս և զգաստութիւն զգայարանացս, զի զուարթ մտօք և արթուն խորհրդով հանգեայց, և գոհութեամբ փառաւորեցից զամենասուրբ տէրութիւնդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԱՂՕԹՔ

ՄԷՆՈՐԴՈՒԹԻՒՆ ԵՐԿՆԱՒՈՐԻ ՀՕՐՆ

ՈՒՐԲՔ և սիրելեալք յամենասուրբ Երրորդութենէն, հոգիք հարկաւորք, Գաբրիէլ, Միքայէլ, Ուրիէլ, Ռափայէլ, հրեշտակք, հրեշտակապետք, պետութիւնք, իշխանութիւնք, զօրութիւնք, տէրութիւնք, սերովբէք, քերովբէք, աթոռք հոգեղէնք, հրեղէնք, բոցեղէնք, լուսեղէնք, և այլ ամենայն գասակարգութիւնքդ երկնաւորք: Որոց առաջի անկանիմ, և

զարդարողին ձերոյ Տեառն Աստուծոյ երկիր պագանեմ, և խնդրեմ ի ձէնջ հայցել ի Տեառնէ զթողութիւն յանցանաց և զքաւութիւն մեղաց իմոց։ Քանզի ձեզ տուեալ է համարձակութիւն վասն բարեխօսութեան ամենայն մեղաւորաց։ Քանզի դուք սուրբք էք, և առ ամենասուրբն մօտակացք։ Դուք անմարմինք էք և անմեղանչականք, իսկ ես մարմնաւոր եմ և մեղանչական։ Դուք անմահ՝ և ի լոյս բնակեալ, իսկ ես մահկանացու և խաւարաւ մեղաց ծածկեալ։ Դուք թեթևընթացք և քան զվիսս երագունք, իսկ ես ծանրացեալ մեղօք և զառածեալ յանցանօք։ Վասն որոյ աղաչեմ զձեզ, աղաչեցէք վասն իմ զՏէր,

հայցեցէք զթողութիւն բազում յանցանաց. քանզի և ինքն իսկ մարդասէրն յօժար է ի փրկութիւն կորուսելոյս։ Մի անփոյթ առնիցէք զխնդիր տարագրելոյս, այլ միաւորեալ զողջանս մեզուցելոյս ընդ ձեր ամենամաքուր մաղթանացդ՝ մատուցէք խնդրողին զկորուսեալն. զի փրկութեամբս իմով ուրախութիւն արասցէ ձեզ Տէր ի յերկինսդ, և ես ձերով միջնորդութեամբդ սրբեալ ի մեղաց, և ազատեալ յամենայն յանցանաց, փառաւորեցից ընդ ձեզ զամենասուրբ զԵրրորդութիւնն, զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգի. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԱՂՕԹՔ

Ա. Տէր Աստուած

ՍՏՈՒԱԾ Աստուած իմ, որ քննեա՛ ըղսիրաս և զերիկամունս, հայեաց յերկնից ի սրբութենէդ քումմէ, և տա՛ս զատարկուսեալ անձն եղկելւոյս։ Ի յանցանաց ազատեա զպարտաւորս, և ի մեղաց մաքրեա՛ զրագմամեղս։ Մի ընկենուր զիս յերեսաց քոց, Տէր, և մի ընդ վայր հարկաներ զիս վասն մեղաց իմոց։ Զարշեմ զքեզ, Տէր, զոր վախճանին իմոյ ի պատշաճի արա՛, և զհրեշտակ խաղաղութեան ա-

ռաքեա առ ծառայս քո. զհոգեվարքն իմ թեթև արա, և զհոգիս իմ խաղաղութեամբ անցո՛ ընդ չարութիւն այսոցն՝ որք են ի ներքոյ երկնից։ Խաւարեսցին աչք նոցա, զի մի տեսցեն. և զչարութիւն նոցա կործանեա, Տէր։ Սատակ սատանա՛ քո, Տէր, ապառեսցին ապառնալիք նոցա. ըմբռնեսցին զարհուրանք նոցա. գանալիցք եղիցին գնացք նոցա. ըմբռնեսցին բռնութիւնք նոցա. խափանեսցին չար խորհուրդք նոցա. տոչորեսցին տարափք նոցա. ջարդեսցին ջոլիրք նոցա. կափահարեսցին կռիւք նոցա. ջնջեսցին ջանք նոցա, և բանակքն բեկցին, զօրքն զարհուրեսցին, շնչմունքն չիջցին, պատերազմունքն պարտեսցին, յար-

ձակմունքն արձանացին,
զէնքն զզուեցին, աղաղակքն
աղաղատեցին, մեքենայքն
մանրեցին, սպառազէնքն
սպառեցին, ցամունքն ցա-
ծացին, մեկնազէնքն մոր-
մոքեցին, ամբարտաւանու-
թիւնքն ամաչեցին, քաջքն
քամահեցին, լրբութիւնքն
լկեցին, և միանգամայն ա-
մենայն միաբանութիւնք նո-
ցա ի սկզբանէ մարդասպա-
նին։ Ա՛ռ զզէն և զասպար,
և արի յօգնել վտանգելոյս.
հան զսուր քո և արգել գնա-
ա յինէն, Տէր Աստուած իմ։
Տուր զօրութիւն ծառայի քո,
զի մի ասասցէ թշնամին, թէ
յաղթեցի նմա. արա առ իս
նշան բարութեան. և նշանաւ
խաչի քո, Տէր, խոցոտեա՛
գնասա. սուրբ բեռոքն բեկ

զբանակ նոցա, կարմիր քղա-
միդովն կարկեա գնասա, հա-
բուածովք եղեգանն ազէ գա-
նեա գնասա. փշեղէն պսակաւն
նեռաձիգ արա գնասա, լեղ-
ւովն և քացախովն՝ զոր ար-
բեր, կսկծակիծ արա գնասա,
ըզխմամբ սուրբ արեանդ հեր-
քեա զհոյլս նոցա, սոսկալի
չարչարանօքն քո չարչարեա
գնասա, ձայնիւն էլի էլի հբր-
զեհեա գնասա, տիպաւն որով
խոցեցար՝ տարամերժեա գնա-
սա. և այլ ամենայն տնօրի-
նական կրիւքն կործանեա
զբելիսար և զամենայն չարու-
թիւն զօրաց նոցա։ Եւ զծա-
ռայս քո, Տէր, անզրդուելի և
անդոզալի պահեա յերկիւղէ
նոցա, և յամենայն պատրա-
նաց նոցա ամրացո՛ յերեւելիս
և յանտեսանելիսն. քանզի քո

պահպանեալ և պարապեալ՝ փառաւորեցից զամենազօր տէրութիւնդ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԱՂՕԹՔ

Ա՛Ռ ՏԷՐ Ա՛ՍՊՈՒԱԾ

ԲՈՒԵԱ, Տէր, զօրութեամբ սուրբ խաչի քո զընդդիմամարտութիւն այսոցն չարին՝ որ պատեալ կան զինև, կործանեա զնոսա։ Ողորմեա ինձ մեղսապարտիս յաւուր տհեղ ատենի քում, և մի տար զիս նոցա ի ժառանգութիւն, զի կարող ես՝ բարեբար, և անդ ողորմել յաւէտ զօրեղութեամբ

ասելով, թէ «Ողջ եղիջիր յոգւոյդ խորտակմանէ, կամ, թէ Թողեալ լիցին քեզ մեղանք քո». կամ, թէ «Երթ ի խաղաղութիւն սրբեալ ի մեղաց». զի անդ է ողորմելն խակսպէս։ Եւ եթէ դատեսցես զիս ըստ մեղաց իմոց, ընդունայն է ինձ յարութիւն ի մեռելոց. բազում են անօրէնութիւնք իմ, այլ և անբաւ է մարդասիրութիւն քո, որ փրկութիւնդ ես ամենեցուն։ Յիշեա զիս՝ գթած, այցելու լեր՝ ողորմած, զի ստեղծուած եմ անարատ ձեռաց քոց. մի ըստ մեղաց իմոց արասցես, և մի ըստ անօրէնութեան իմում հատուցաներ ինձ։ Մի տայցես ինձ զնալ յաւիտենական կորուստն վասն բազում յանցանաց իմոց՝ զոր գործեցի

յաւաղելի կեանս իմ, այլ փբբ-
կեա զիս յանչէջ հրոյն և յան-
ներելի տանջանաց, յիշելով
միայն զաստուածային խոստ-
մունս քո. «Որ ոչ եկիր կո-
րուսանել զմարդկան հոգիս,
այլ կեցուցանել»։ Յոյց ինձ
զանճառ մարդասիրութիւնդ,
և արա զիս հաղորդ ընդ ա-
ւազակին այնմիկ՝ որ միով բա-
նիւ ժառանգորդ եղև դրախ-
տին։ Շնորհեա ինձ զհայ-
ցուածս իմ, զի դու միայն ես
առուղ կենաց իմոց. ողոչեմ
զքեզ, Տէր, ողոտեա զիս ի
դառն ծառայութենէ սատա-
նայի, և մոյծ զիս ի յարկս
փառաց քոց ընդ սիրելիս ա-
նուան քում սրբոյ, և մի առ-
ներ համար անօրէնութեան
իմոյ։ Դոչեմ առ քեզ ըստ
Դաւթայ, «Թէ զանօրէնու-

թիւնս իմ քննես, Տէր, իսկ
ո՞ կարէ կալ առաջի քո»։
Այլ դու մարդասէր, նայեա
յիս քաղցրութեամբ քո, և
մի յիշեր զբազմութիւն զա-
զրելի մեղաց իմոց։ Գիտեմ,
զի չեմ արժանի ողորմութեան
քո, բայց դու և անարժանից
սովոր ես ողորմել, որ եկիր
ի խնդիր կորուսեալ պատ-
կերիս, և նորոգեալ փրկեցեր
և փառաւորեցեր. զթասցիս
վշտագին անձին իմոյ, զի
քեզ տուեալ է իշխանութիւն
կեցուցանել, քանզի մեծապէս
փոյթ է քեզ փրկութիւն մեր։
Զթա՛ և յիս, որ առաւել ու-
նիմ քան զամենեսեան պէտս
մարդասիրութեան սիրոյ քո
և զանճառելի քաղցրութեան
սիրոյ քո, և մի պահանջեր
համարս բիւրուց մեղաց իմոց,

զոր ինչ յանցեայ ի մոռաց-
մանէ պատուիրանաց քոց. մի
տայցես զիս ձգել ի խաւարն
արտաքին, ուր լալ աչաց է և
կրճել ատամանց, այլ ընկալ-
ցիս ի փարախ հօտի քո։ Եւ
արժանի արա զիս զողորմու-
թիւն գտանել ի քէն, որ ոչ
դարձուցանես զերեսս քո, ո-
րոց խնդրեն ի քէն, մի և
յինէն դարձուցաներ, ապա-
չեմ զքեզ, Տէր իմ։ Բարեխօ-
սութեամբ անարատ մօր քո և
Կուսի, և ապաշանօք ամենայն
սրբոց քոց երկնաւորաց և եր-
կրաւորաց՝ որք ի սկզբանէ
հանոյ եղեն քեզ աստուածու-
թեան քո, ընկալ զաղաչանս
մեղուցեալ քո ծառայիս, և
մի անտես առներ զիս ի բա-
րերար խնամոց քոց, զի զու
միայն ես մարդասէր, բազ-

մագութ և ողորմած, Տէր մեր
Յիսուս Քրիստոս։ Զի թէ-
պէտ և ինձ անհամարձակելի
է խնդիրս, բայց քեզ առաւել
կամելի է, զի ողորմած ես.
արժանի արա զիս ընդ սուրբս
քո մատնել յերկնային խո-
րանն լուսոյ, և ժառանգել
զպատրաստեալ ի սկզբանէ
աշխարհի սրբոց քոց զարքա-
յութիւնդ, և ընդ նոսին միշտ
զոհանալով փառաւորել զքեզ
ընդ Հօր և ընդ Սուրբ Հոգ-
ւոյդ. այժմ և միշտ և յաւի-
տեանս յաւիտենից. ամէն։

ԱՂՕԹՔ

Ի Սուրբն Աստուածածին և առաքելոյն Սուրբս

ԲԿՆԱՅԻՆ զու�, և առագաստ անմահ արքային, մայր լուսոյ՝ և Կոյս անապատ. որ մարմնով ծնար զԲանն Աստուած, և երանեցար յամենայն ազգաց. որ ես պարծանք ազգի մարդկան, և միշտ բարեխօս առ Միածինն։ Անկանիմ առաջի քո, և աղաչեմ զքեզ. քո սուրբ կաթամբդ՝ որով սնուցեր զանզրանիկ Որդին, բարեխօսեա առ նա, զի արբեսցէ զիս ի մեղաց և ա-

զատեսցէ յամենայն սխալանաց։

Այլ և դուք, ով Սուրբք և սիրեցեալք ի Տեառնէ, հրաւիրեալքդ ի սկզբանէ և ընտրեալքդ յարտաքին, առաքեալք և մարգարէք, հայրապետք և վարդապետք, մարտիրոսք և վկայք, նահատակք և ճգնաւորք, կուսանք և միանձունք, և այլ ամենայն հոմօրէն հաճայացեալքդ Աստուծոյ յիւրաքանչիւր յազգաց, որք սիրեցէք զՏէրն բոլորից ի բոլոր սրտէ, և տկար մարմնով զանմարմնոցն ցուցէք զհանդէս քաջութեան. քարոզիրք քարկոծեալք, քերանօք քերեալք, հրով փորձեալք, սրով խողխողեալք, ջրով խեղդեալք, պարանօք կախեալք, փայտիւ խաչեալք, սովով հա-

լածեալք, ծարաւով մաշեալք,
եղեգամբ ճաղկեալք, գազա-
նօք ահարեկեալք, ջայլատեօք
ջարդեալք, տատասկօք տան-
ջեալք, հեղուսիւք բեւեռեալք,
ի բարձանց գահավիժեալք,
խորտակօք սուղեալք, նետիւք
հարեալք, ձեռամբ կոփեալք,
ի սիրելեաց մատնեալք, ի ծա-
նօթից ծանակեալք, ի բարե-
կամաց ատեցեալք, ի ննդեան
տեղեաց հալածեալք, նաև այլ
ամենայն չարչարանօք չար-
չարեալք, և խաչակցեալք ընդ
Քրիստոսի, որք և ընդ նմին
թագաւորելոց էք յանվախ-
ճան յաւիտենին։ Եւ արդ,
ես անպտուղս ի բարեաց, և
ունայնս յարդարութենէ, և
բազում մեղօք պաշարեալս,
անկանիմ առաջի տէրունական
սակերաց ձերոց, որ էք ծաղ-

կեալք ընդ ամենայն տեղիս,
յորոց ոչ կորիցէ և ոչ մաղ
մի. ազաչեմ զձեզ՝ սիրովն
Քրիստոսի զոր ունիք առ նա,
բարեխօս լերուք առ նա վասն
բազմամեղ անձին իմոյ, զի
մաքրեսցէ զիս ի յաղտոյ մե-
ղաց, և ազատեսցէ ի պար-
տեաց յանցանաց, և փրկեսցէ
զանօրինեալս յանեզրական
տանջանացն և ի վշտագին
դառնութենէ գեհենին, և ա-
բասցէ զիս մատնակից և հա-
ղորդս հանգստեանդ ձերում.
զի և ես ընդ ձեզ հանգու-
ցեալ փառաւորեցից զամենա-
սուրբ Երրորդութիւնն, այժմ
և միշտ և յաւիտեանս յաւի-
տենից. ամէն։

ԱՂՕԹՔ

Ա. Տէրն մեր Յիսուս Քրիստոս վասն ճանապարհի

ԱՌԱՋՆՈՐԴ կենաց և ճանապարհ ճըշմարտութեան, Տէր մեր Յիսուս Քրիստոս, որ առաքնորդեցեր Յովսեփայ յԵգիպտոս, և Իսրայելացւոցն ընդ ծովն Կարմիր, և Մովսիսի ի լեառն Սինէական, և ժողովրդեանն յերկիրն պարգևաց, և Կղէոփասեանցն ճանապարհակից եղեր յԵմմաուս։ Աղաչեմ զքեզ, Տէր, առաքնորդեա մեզ և եղբարց մերոց գնալ խաղաղութեամբ

պատաքիկայ ընթացս. փրկեա յերևելի և յանտեսանելի թշնամւոյն, և բարի առաքնորդեա ի դէմ եղեալ տեղին, զի դու ես ճանապարհ և ճըշմարտութիւն և կեանք, և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԱՂՕԹՔ

Աստուծոյ Տէր Յիսուս Քրիստոս

ՈՅՍ ի լուսոյ, լոյս աշխարհի, Քրիստոս Աստուած, որ լուսով ողորմութեամբդ քո լուսաւորեցեր զարարածս ամենայն, և ի հաւատացելոց քոց հարածեա զխաւար մեղաց և զանգիտութեան: Եւ ի խընդրոյց զողորմութիւն քո ոչ անտես առնես, բարերար, որ զաւազակն միով բանիւ սրբեցեր ի մեղաց, և զարովքեա՛փակ գուռն դրախտին բացեր նմա, և ընդ քեզ մտանել ի յաւիտենից հանգիստն խոստացար նմա: Եւ արդ, իմ տաեալ զաղօթս ապաշանաց նորա կարդամ առ քեզ, յիշեա և զիս, Տէր, յորժամ գաս արքայութեամբդ քով, և բաց ինձ զգուռն ողորմութեան քո՝ մտանել ի հանգիստն յաւիտենից, և ընդ ամենայն սուրբս փառաւորել զամենազօր տէրութիւնդ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԱՂՕԹՔ

Աւ Տէր Աստուած

Տէր տէր, հայր և Աստուած կենաց իմոց, անկանիմ առաջի քո և աղաչեմ զքեզ, հայեա՛ ի տառապանս ծառայիս քո, և խնայեա՛ ի մեղաց մոլորեալ անձն իմ։ Բժշկեա՛ զրեկեալս, և կանգնեա՛ զգլորեալս, զի՛ սպեղանի խոցեալ և թարախեալ հոգւոյս, և պատեա՛ զվէրս վիրաւորելոյս։ Վերականգնեա՛, քանզի կորեայ և կործանեցայ բազում անօրէնութեամբս, և չարիք իմ բարձրացան քան զգլուխ իմ. տառուանք մեղաց պատեցան զինև եօթնպատիկ,

և ապականք իմ պաշարեցին զիս, և ոչ գոյ թիւ անզգամութեան իմոյ։ Քեզ մեղայ, փրկութիւնդ յաւխտենից, ոչ ունիմ վստահութիւն կոչել զանուն ահաւորիդ ի վերայ վսերիս. ամօթ երեսաց իմոց ծածկեաց զիս, և հարան յիս փուչք մեղաց իմոց։ Եւ արդ, Տէր իմ Տէր, առ ո՞ ապաւինեցայց, և կամ զո՞ արարից ինձ յոյս և ապաւէն փրկութեան իմոյ։ Բայց թէպէտև բազում անգամ բարկացուցի զԲարձրեալդ, սակայն առ քեզ կարդացից։ Մի մատներ ի դատաստան ընդ ծառայիս քո, Տէր իմ, և մի հատուցաներ ըստ գործոց իմոց։ Մի սրտմտութեամբ և սպառնալեօք սաստեր ինձ, Տէր իմ, և մի բարկութեամբ ահաբեկեսցես զեղ-

կելիս , Աստուած իմ։ Մի մասներ զմեզուցեալս ի մոր-
մոքումն յաւիտենից կայծա-
կանցն, Տէր իմ, և մի յու-
զարկեր զսղոմելիս յանողորմ
տանջանան, Աստուած իմ։ Մի
տար զտարագրեալս ի տագ-
նապ տարտարոսին, Տէր իմ,
և մի տիրեսցեն ի վերայ իմ
վհատելոյս վիշտք անապատ,
Աստուած իմ։ Մի բարձրասցի
ի վերայ իմ բոցն հրաբորբոք,
Տէր իմ, և մի ածեր ի վերայ
իմ բազմամեղիս զհնոցն մթա-
գին, Աստուած իմ։ Մի կա-
քաւեսցեն ի վերայ տառապե-
լոյս հոյլք անվախճան որ-
դանցն, Տէր իմ, և մի ածեր
ի վերայ բազմամեղիս զա-
զրագործ՝ զչար ժանեաց զու-
տելիս նոցա, Աստուած իմ։
Մի ծածկեսցէ զծանակեալ

ծառայս ծոմն հրեղէն, Տէր
իմ, և մի վազեսցէ ի վերայ
վրդովելոյս վտակ հրախառն
յարձանաց, Աստուած իմ։ Մի
առաքեր զիս ի խաւարն որ-
տաքին, Տէր իմ, և մի ան-
կայց աշխարելիս ի գուբն
ապականութեան , Աստուած
իմ։ Մի որոշեսցես զիս յե-
բամէ երանելեացն, Տէր իմ,
և մի զրկեսցես զյանցաւորս
ի հաղորդութենէ ընտրելոցն,
Աստուած իմ։ Մի զահագին
զձայնն ձայնեսցես, եթէ «Ծա-
ռայ չար և վատ», Տէր իմ.
և մի անտես առներ զտարա-
կուսեալս ի յաւիտենից օրհ-
նութեանցն, Աստուած իմ, այլ
ողորմութեամբ քով յաւիտե-
նից ողորմեա ինձ, և անհաս
մարդասիրութեամբ քով գթա
յիս ։ Աղաչեմ զքեզ , Տէր ,

սրբարար զօրութեամբ քով սրբեա զիս, զաղտեղեալս մեղաց, և ազատարար իշխանութեամբ քով ազատեա զիս ի դատն վչտաց գեհենոյն։ Տուր ինձ տեղի ի լուսափայլ առագաստին, և դասեա զտարակուսեալս ի դասս խմաստուն կուսանացն։ Տուր, Տէր, ազաչեմ զքեզ, զիսոստացեալ բարիսն ընդ ամենայն ընտրեալսն, զի ընդ նոսին փառաւորեցից զամենասուրբ զԵրրորդութիւնդ, զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգիդ, այժմ միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԱՂՕԹՔ

Ա։ Որդի Աստուած

Որդի Աստուծոյ, Աստուած ճշմարիտ, որ վասն մերոյ փրկութեան մարդկան եղեր որդի մարդոյ, որդի Աստուծոյ, որ վասն անհաս մարդասիրութեան քո խոնարհեցար յանճառ փառաց քոց, և եղեալ ի խնդիր կորուսեալ պատկերիս քո տանս Ադամայ, և ընդ անօրինական կրից քոց արարեր փրկութիւն ի մէջ երկրի, և ազատեցեր ի ծառայութենէ մահու և մեղաց, և հրաւիրեցեր զհողեղէնքս յարդարութիւն և ի փառս քո, և արարեր հաղորդ և ժառան-

գակից զմահկանացու բնու-
թիւնս երկնային անմահական
զօրացն։ Եւ արդ, Տէր Յի-
սուս Քրիստոս, Աստուած իմ,
որ զայս ամենայն բարութիւնս
մարդասիրապէս շնորհեալ յօ-
րինեցեր, մի միայն ես ե-
զեց զրկեալ ի ձրի պարգևացդ
վասն ծուլացեալ մեղաց իմոց.
մի միայն ես ունայն գտայց
յայդպիսի փրկութենէդ՝ վասն
բանից յանցանաց իմոց, այլ
որպէս ելեր ի խնդիր կորու-
սեալ ոչխարին, և գտեալ ու-
սօք բարձեր, լեր և ինձ խըն-
դրող կորուսելոյս. և զոր օ-
րինակ ողորմեցար քանանուհ-
ւոյն և զհայցուածն կատա-
րեցեր, կատարեա և զիմ հայ-
ցուածս, որ վասն մեղաց իմոց
պաղատիմ. և որպէս սրբեցեր
բանիւ բերանոյ քո զբորոտն,

սրբեա և զիս յամենայն սխա-
լանաց իմոց. և զոր օրինակ
զանդամալոյծն առողջացու-
ցեր, առողջացո և զիս զչա-
բեօք լցեալս. և որպէս զհի-
ւանդսն բժշկեցեր, բժշկեա և
զիս զցանկութեամբ հիւան-
դացեալս. և զոր օրինակ
զդևսն ի մարդկանէ հալա-
ծեցեր, հալածեա և յինէն
զթշնամին կենաց իմոց. և
որպէս զկոյրսն լուսաւորեցեր,
լուսաւորեա և զիս զխաւա-
բեալս մեղօք. և զոր օրինակ
զմեռեալսն յարուցեր, յարո՛
և զիս զմահացեալս յանցա-
նօք. և որպէս ալեաց ծովուն
սաստեցեր, սաստեալ հանդար-
տեա և զալիս մեղաց իմոց.
և զոր օրինակ զսովեալսն յա-
նապատին կերակրեցեր, կե-
րակրեա՛ և զիս զճշմարիտ սո-

վեալը յառատ ողորմութենէդ քումմէ։ Տէր Յիսուս Քրիստոս, Աստուած իմ, որ զամենայն մարդ կամիս կեալ և գալ ի գիտութիւն ճշմարտութեան, ուստի և զանձն քո Եւսեբ փրկանս փոխանակ բազմաց, յիշեա՛ զիս և ողորմեա ինձ։ Տէր Յիսուս Քրիստոս, Աստուած իմ, որ վասն իջանելոյ քո ի հայրական ծոցոյն անճառ ծննդեամբ ի Սրբուհւոյն, խանձարրօք պատելոյն, ի մսուր դնելոյն, կաթամբ կերակրելոյն, բազկօք բառնալոյն, գրկօք գգուելոյն, շրթամբք հոգեղէն համբուրելոյն, և ի տաճարն ընծայելոյն, յիշեա՛ զիս և ողորմեա ինձ։ Տէր Յիսուս Քրիստոս, Աստուած իմ, վասն ի Յորդանան մտանելոյն, ի Յով-

հաննէ մկրտելոյն, իջանելոյ Սուրբ Հոգւոյն, ի Հօրէ վկայելոյն և յանապատի փորձելոյն, յիշեա՛ զիս և ողորմեա ինձ։ Տէր Յիսուս Քրիստոս, Աստուած իմ, վասն աստուածահրաշ ոգբանչելագործելոյն, զմեզն թողլոյն, զնեղեալսն բժշկելոյն, զմեռեալսն յարուցանելոյն, զաստուածութիւնդ յայտնելոյն, յիշեա՛ զիս և ողորմեա ինձ։ Տէր Յիսուս Քրիստոս, Աստուած իմ, վասն ի վերնատունն բազմելոյն, զառաքեալսն լուանալոյն, զնոր ուխտ պատարագին հաստատելոյն, և ի Յուդայէ մատնելոյն, յիշեա՛ զիս և ողորմեա ինձ։ Տէր Յիսուս Քրիստոս, վասն խուժանին Հրէից զքեզ ըմբռնելոյն, կապելոյն, ձորձապատելոյն, հարկանելոյն,

հայհոյելոյն, կոփելոյն, ձա-
զելոյն, ծեծելոյն, թքանելոյն,
այլն առնելոյն, յիշեա զիս
և ողորմեա ինձ։ Վասն ի յա-
տենի քո կալոյն, ի դատաւո-
րէն դատելոյն, ի Հերովդէ
հարցափորձելոյն, ի զպրացն
դարձելոյն, ի քահանայիցն
կշտամբելոյն, ի ժողովրդոյն
պարսաւելոյն և ի զինուորացն
վարելոյն, յիշեա զիս և ո-
ղորմեա ինձ։ Վասն կենսարեր
փայտին բառնալոյն, ի Գող-
գոթա կանգնելոյն, կամաւոր
բարձրանալոյն, և հեղուսիւք
բեւեռելոյն, յիշեա զիս և ողոր-
մեա ինձ։ Տէր Յիսուս Քրիս-
տոս, Աստուած իմ, վասն
աստուածախառն մարմնոյդ
մերկանալոյն, կարմիր քղա-
միդով զարդարելոյն, պատ-
մուճանելոյն, հանդերձիցն

բաժանելոյն, և փշովք պսակ-
կելոյն, յիշեա զիս և ողորմեա
ինձ։ Տէր Յիսուս Քրիստոս,
վասն քրանաչան ծարաւելոյն,
լեղի և քացախ ճաշակելոյն,
մեծաձայն առ Հայր կարդա-
լոյն, զելի էլի զոչելոյն, և
աստուածեղէն հոգւոյդ ուան-
զելոյն, յիշեա զիս և ողոր-
մեա ինձ։ Տէր Յիսուս Քրիս-
տոս, Աստուած իմ, վասն ի
խաչէ իջանելոյն, ի Յովսեփայ
պատատակալելոյն, ի գե-
բեզման իջանելոյն, մատա-
նեաւ կնքելոյն, զդժոխս ա-
ւերելոյն, ի մեռելոց յառնե-
լոյն, զաշակերտան օրհնելոյն,
և փառօք առ Հայր համբառ-
նալոյն, յիշեա զիս և ողոր-
մեա ինձ։ Տէր Յիսուս Քրիս-
տոս, Աստուած իմ, մի ըստ
գործոց իմոց հատուցաներ

ինձ, մի մերժեր զիս յողոր-
մութենէ քումմէ, և մի ան-
տես առներ զգործս ձեռաց
քոց, և մի զրկեր զիս յերա-
նաւէտ խոստմանց քոց. մի
մոռանար զիս յողորմութենէ
քումմէ, և մի առաքեր զիս ի
տանջանսն յաւիտենականս,
այլ յիշեա զիս, Տէր, և ողոր-
մեա ինձ, Տէր, և մի տուչորեր
զիս հրեղէն տապակօքն, մի
գանեացես զիս գեհենամէջ, և
մի բերցես ի վերայ իմ զրոցն
բորբոքեալ. յիշեա՛, յիշեա՛,
յիշեա՛, յիշատակդ յաւիտե-
նից, Տէր Յիսուս Քրիստոս,
Աստուած իմ, և նայեա՛ առ
իս քաղցրութեամբ։ Եւ վասն
փառաց երեսաց Հօր, և վասն
փառակցութեան Հոգւոյդ
Սրբոյ, և վասն սիրոյ և բա-
րեխօսութեան սրբոյ Աստուա-

ծածնին, և ամենայն սրբոց
քոց երկնաւորաց և երկրաւո-
րաց՝ ազատեա՛ զիս յաններելի
տանջանացն և ի գառն վշտաց
գեհենին, և արա՛ զիս արժանի
երկնից արքայութեանդ, և
քեզ ընդ Հօր և Սուրբ Հոգ-
ւոյդ փառք, իշխանութիւն և
պատիւ յաւիտեանս յաւիտե-
նից. ամէն։

ՅԱՆԿ ԱՂՕԹԻՑ

ԸՍՏ ԳԼԽԱԿԱՐԳՈՒԹԵԱՆՑ

		Էջ
Յառաջաբան	. . . . .	5
Աղօթք Կիւրակէի առաւուն	. .	11
» Երկուշաբաթի »	. . .	13
» Երեքշաբաթի »	. . .	15
» Չորեքշաբաթի »	. . .	17
» Հինգշաբաթի »	. . .	19
» Ուրբաթու »	. . .	21
» Շաբաթու »	. . .	24
» առ. Տէրն մեր Յիսուս Քրիստոս	. . . . .	26
» առ. Սուրբ Աստուածածնին	. . . . .	31
» առ. Տէրն մեր Յիսուս Քրիստոս	. . . . .	35
» առ. Տէրն մեր Յիսուս Քրիստոս	. . . . .	37
» առ. Տէրն մեր Յիսուս Քրիստոս	. . . . .	39
» առ. Տէր Աստուած	. .	41

		Էջ
Աղօթք	առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս	44
»	առ Տէր վասն գիշերոյ.	48
»	միջնորդութեամբ երկնային զօրացն . . .	51
»	առ Տէր Աստուած . .	54
»	առ Տէր Աստուած . .	58
»	Ի Սուրբն Աստուածածին և առ ամենայն Սուրբս.	64
»	առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս՝ վասն հանապարհի	68
»	առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս	70
»	առ Տէր Աստուած . .	72
»	առ Որդին Աստուած .	77

ՅԱՆԿ

ՍԿԶԲՆԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ ԱՂՕԹԻՑ

	Էջ
Յարիսենից Աստուած	11
Ով ամենակալ Տէր իմ. . . .	13
Վերին վայելչութեանցդ . . .	15
Անկանիմ առաջի քո	17
Ներող և ներգործող	19
Քաղաքս բարի և ամենակարող .	21
Սուրբ Երրորդութիւն. . . .	24
Գառն Աստուծոյ, Տէր իմ . .	26
Աստուածածին, մայր Քրիստոսի.	31
Ոգի լուսոյ և ճշմարիտ . . .	35
Նայեա՛ քաղցրութեամբ . . .	37
Երկնաւոր թագաւոր	39
Յաւագնեալս մեղօք	41
Ի քեզ յուսամ Յիսուս. . . .	44

Էջ

Աղաչեմ զքեզ, Տէր 48
Սուրբք և սիրեցեալք 51
Աստուած Աստուած իմ . . . 54
Ցրուեա, Տէր, զօրութեամբ . . 58
Երկնային գուռն. 64
Առաջնորդ կենաց 68
Լայս ի լուսոյ. 70

Տէր Տէր, հայր և Աստուած . . 72
Որդի Աստուծոյ, Աստուած . . 77

ՀՀ Ազգային գրադարան
NL0159370

5531/1